Եռյակներ 1

Տրված են n թիվը և n տարր պարունակող 3 զանգված՝ a, b և c։ Ձեր խնդիրն է գտնել այնպիսի (i, j, k) եռյակների քանակը, որ տեղի ունենա հետևյալ պայմանը՝ a[i] < b[j] < c[k]:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է մեկ բնական n (1 <= n <= 5000) թիվ։ Հաջորդ երեք տողերում տրված են համապատասխանաբար a, b և c զանգվածները։ (0 <= a[i], b[i], c[i] <= 10^9):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ պայմանին բավարարող եռյակների քանակը։

Օրինակ

Մուտք.
4
12 6 8 3
1 3 5 8
9 15 7 5
Ելք.
7